# ՌԱԶՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-112

**Հիմնաբառեր.** *ռազմական զարգացման ցուցանիշներ, պաշտպանություն, ռազմական ծախս, զինված ուժերի անձնակազմ, զենքի արտահանում, զենքի ներմուծում*

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

*Աշխատել է պետական կառավարման համակարգի տարբեր ոլորտներում և ունի երկարամյա փորձ: 513 հրապարակումների և հոդվածների, այդ թվում՝ 47 մենագրության (ներառյալ՝ կոլեկտիվ) հեղինակ է: Ներկայում «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ է:*

*https://orcid.org/0000-0002-5077-4253*

*Ժամանակակից աշխարհում ռազմական զարգացումը և պաշտպանությունը յուրաքանչյուր երկրի զարգացման համար դառնում են հիմնարար գործառույթներ: Բազմաթիվ երկրներ, ղեկավարելով իրենց ռազմական զարգացման ցուցանիշները, առավել մեծ ուշադրություն են դարձնում ռազմական ծախսերին՝ դրանք դիտարկելով որպես պաշտպանության և կայունության երաշխիք: Երկրի պետական անվտանգության և պաշտպանունակության ապահովումը զարգացման բոլոր ժամանակներում մեծապես կախված է եղել ռազմական նորագույն տեխնոլոգիաների ներդրումից և կայուն տնտեսություն ունենալուց: Վերջին իրադարձություններն աշխարհում և հատկապես՝ Հարավային Կովկասի հանրապետություններում հիմք են տալիս պնդելու, որ փոքր տնտեսությամբ երկրները պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն իրենց տնտեսական քաղաքականությանը՝ ռազմական զարգացման համատեքստում, ինչն էլ կնպաստի երկրի պաշտպանունակության և անվտանգության ապահովմանը:*

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Պետությունների ռազմական ծախսերը բոլոր ժամանակներում էլ եղել են հասարակության ուշադրության կենտրոնում: Այդ հանգամանքը պայմանավորված է այն փաստով, որ ռազմական ծախսերն ինչպես պետական բյուջեի, այնպես էլ հասարակության յուրաքանչյուր անդամի հաշվով կազմել են հսկայական գումարներ: Հասկանալի է, որ ռազմական

ծախսերը, ի վերջո, հանուրդ են հասարակության վերջնական սպառումից, քանի որ դրանք անմիջականորեն չեն կարող սպառվել ըստ հասարակության յուրաքանչյուր անդամի: Ավելին, երկարատև քննարկումների ընթացքում, թե ռազմական ծախսերը հասարակական ամբողջական արդյունքի առաջին (արտադրության միջոցների արտադրություն) թե երկրորդ ստորաբաժանման (սպառման առարկաների արտադրություն) խմբին են դասվում, առավել ընդունելի համարվեց այն տեսակետը, որ ռազմական ծախսերը չեն կարող դասվել ո՛չ առաջին և ո՛չ էլ երկրորդ ստորաբաժանման կազմում, քանի որ իրենց տնտեսագիտական բովանդակությամբ չեն համապատասխանում թե՛ մեկին և թե՛ մյուսին: Ըստ էության, ընդունված էր այն տեսակետը, որ ռազմական ծախսերը պետք է մտնեն առանձին խմբի մեջ, քանի որ դրանք ավելի շատ նման են հասարակության կորստին, քան թե հասարակական ամբողջական արդյունքի մաս են: Այս դեպքում ռազմական ծախսերը նմանեցվում էին այնպիսի տարերային աղետների, ինչպիսիք են երկրաշարժը, ջրհեղեղը, պտտահողմը և այլն:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ ռազմական ծախսերի միջոցով է իրականացվում պետությունների ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ընդլայնումը (իհարկե, այլ միջոցների օգնությամբ), որի հետևանքով պատերազմող կամ ռազմական ընդհարման կողմերը կրում են ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական և նյութական հսկայական կորուստներ: Ավելին, հատկապես վերջին ժամանակներում նման ընդհարումները հաճախ անվանվում են հատուկ ռազմական գործողություններ, ինչից, իհարկե, երևույթի էությունը չի փոխվում: Այդպիսին է, օրինակ, ռուս-ուկրաինական ռազմական գործողությունը (այն սկսվել է 2022 թվականի փետրվարի 24-ին), որի ընթացքում թե՛ ռուսական և թե՛ ուկրաինական կողմերն արդեն իսկ ունեցել են տասնյակ հազարավոր մարդկային զոհեր և վիրավորներ, կատարել հսկայական ծախսեր: Ռուս-ուկրաինական պատերազմն էական ազդեցություն է թողել ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ տարածաշրջանային զարգացումների և առաջընթացի վրա: Էականորեն թանկացել են էներգակիրները և հատկապես՝ սննդամթերքը, ինչի հետևանքով կենսամակարդակը զգալիորեն նվազել է:

Ռազմական ծախսերի հիմնախնդիրը, լուրջ ռազմաքաղաքական էությունից բացի, հատկապես մեծ կարևորություն է ստացել Հարավային Կովկասի տարածաշրջանում՝ առանձնապես Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական ընդհարումների տեսանկյունից: Թեև 1990-ական թվականներին հայկական կողմն այդ ընդհարումների (պատերազմների) ժամանակ հասել էր էական ձեռքբերումների, սակայն 2020 թվականի 44-օրյա

Մերուժան ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

*2008 թ.-ին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի կողմից արժանացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի: Վերապատրաստումներ, դասընթացներ է անցել, ինչպես նաև գործունեություն ծավալել աշխարհի տարբեր երկրների կազմակերպություններում: Այժմ աշխատում է «Քաղաքագիտական, իրավագիտական և տնտեսագիտական հետազոտությունների և կանխատեսումների» ՀԿ-ում:*

*https://orcid.org/0000-0003-3608-0375*

պատերազմից հետո հաջողությունն ուղեկցեց ադրբեջանական կողմին: Հայտնի է նաև, որ ռազմական գործողություններում հաղթում է ուժեղը, իսկ ուժի հիմքում պատերազմելու արվեստն է, ինչը չափվում է ռազմամթերքի առաջադիմությամբ, բանակի կառավարման արդյունավետությամբ և մի շարք այլ հանգամանքներով: Այս առումներով, էական նշանակություն ունեն պաշտպանության համար կատարված ծախսերը և հատկապես՝ մարտարվեստի առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը:

Ավելորդ չէ հիշեցնել նաև, որ առաջին պետությունների ստեղծման հիմնական գործառույթը եղել է պաշտպանությունը, որը հազարամյակների ընթացքում շարունակում է մնալ որպես այդպիսին: Այս է պատճառը, որ ռազմական ծախսերը հետաքրքրում են ոչ միայն պաշտպանության ոլորտի զինվորականներին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի, քանի որ երկարատև լարված մթնոլորտը ձևավորում է հասարակության բարոյահոգեբանական վիճակը: Այլ կերպ ասած, ամուր պաշտպանություն ունեցող երկիրն ու նրա քաղաքացիները միշտ էլ ավելի շահեկան իրավիճակում են:

### ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ստոկհոլմի Խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի փորձագետները մշակել և սահմանել են ռազմական ծախսերի բովանդակության և հաշվարկման ընդհանուր և միասնական մոտեցում (որն ընդունել և կիրառում է Համաշխարհային բանկը)[1]:

Համաշխարհային բանկի մեթոդաբանության համաձայն[2] համաշխարհային տնտեսության (theglobalecomy.com) կողմից իրականացվող ռազմական ծախսերի վերաբերյալ նյութերը հրապարակվում են հետևյալ կտրվածքով.

- ռազմական ծախսեր՝ միլիարդ ԱՄՆ դոլար,
- ռազմական ծախսեր՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով,
- ռազմական ծախսեր՝ ընդհանուր պետական ծախսերի նկատմամբ տոկոսով,
- զինված ուժերի անձնակազմ,
- զինված ուժերի անձնակազմ՝ աշխատուժի նկատմամբ տոկոսով,
- զենքի արտահանում՝ միլիոն ԱՄՆ դոլար,
- զենքի ներմուծում՝ միլիոն ԱՄՆ դոլար:

### ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 1-ում, 2-ում և 3-ում ներկայացված են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմական զարգացման հիմնական ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության ռազմական զարգացման միտումների մասին իմաստ ունի պատկերացում տալ նաև ըստ տարիների առավել խոշորացված ագրեգացման կտրվածքով: Այս առումով, նպատակահարմար ենք համարում ներկայացնել 1992-2000 թթ. (Վրաստանի համար՝ 1993-2000 թթ.), 2001-2010 թթ., 2011-2021 թթ. ցուցանիշները: Հայաստանի Հանրապետության ռազմական ծախսերն ունեն հետևյալ պատկերը՝ 1992-2000 թթ. սույն ցուցանիշը կազմել է 0,38 մլրդ ԱՄՆ դոլար, Ադրբեջանի դեպքում՝ 0.71 (1,8 անգամ ավելի, քան ՀՀ-ում), Վրաստանի դեպքում՝ 0.2 մլրդ ԱՄՆ դոլար: 2001-2010 թթ. համապատասխանաբար՝ 2.08 մլրդ ԱՄՆ դոլար, 7.21 մլրդ ԱՄՆ դոլար (3,4 անգամ), 3.4 մլրդ ԱՄՆ դոլար: 2011-2021 թթ. համապատասխանաբար՝ 5.4 մլրդ ԱՄՆ դոլար, 27.42 մլրդ ԱՄՆ դոլար (5 անգամ), 3.99 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդամենը 1992-2021 թթ. համապատասխանաբար՝ 7.86 մլրդ ԱՄՆ դոլար, 35.34 մլրդ ԱՄՆ դոլար (4,4 անգամ), 8.3 մլրդ ԱՄՆ դոլար: Ասվածն ավելի ակնառու դարձնելու համար գծապատկեր

[1] Stockholm International Peace Research Institute. The economic outlook around the world.
[2] https://data.worldbank.org/indicator/MS.MIL.XPND.GD.ZS

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Հայաստանի Հանրապետության ռազմական զարգացման հիմնական ցուցանիշները, 1992-2021 թթ.[3]**

| Տարի | Ռազմական ծախսեր՝ միլիարդ ԱՄՆ դոլար | Ռազմական ծախսեր՝ ՀՆԱ-ի երկրորդական տոկոսով | Ռազմական ծախսեր՝ ընդհանուր պետական ծախսերի կրճատման տոկոսով | Հիերկած ուժերի անձնակազմ | Հիերկած ուժերի անձնակազմի՝ աշխատաշուկայի եկամտավոր կոնկուրսով | Հենքի արդիականում՝ միլիոն ԱՄՆ դոլար | Հենքի ներդրումում՝ միլիոն ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1992 | 0 | 2.2 | տ.չ. | 20000 | 1.51 | տ.չ. | տ.չ. |
| 1993 | 0.01 | 2.3 | տ.չ. | 21000 | 1.64 | տ.չ. | 2 |
| 1994 | տ.չ. | | տ.չ. | 45000 | 3.59 | տ.չ. | 181 |
| 1995 | 0.05 | 4.06 | տ.չ. | 61000 | 4.92 | տ.չ. | 47 |
| 1996 | 0.05 | 3.28 | տ.չ. | 58400 | 4.72 | տ.չ. | 70 |
| 1997 | 0.06 | 3.91 | տ.չ. | 61000 | 4.94 | տ.չ. | տ.չ. |
| 1998 | 0.07 | 3.53 | տ.չ. | 54400 | 4.41 | տ.չ. | տ.չ. |
| 1999 | 0.07 | 3.7 | տ.չ. | 54400 | 4.41 | տ.չ. | 2 |
| 2000 | 0.07 | 3.56 | տ.չ. | 42300 | 3.42 | տ.չ. | տ.չ. |
| 2001 | 0.07 | 3.13 | տ.չ. | 43000 | 3.47 | տ.չ. | տ.չ. |
| 2002 | 0.06 | 2.7 | տ.չ. | 45600 | 3.67 | տ.չ. | տ.չ. |
| 2003 | 0.08 | 2.73 | տ.չ. | 45600 | 3.66 | տ.չ. | տ.չ. |
| 2004 | 0.1 | 2.74 | տ.չ. | 49000 | 3.91 | տ.չ. | 118 |
| 2005 | 0.14 | 2.87 | 14.45 | 49000 | 3.89 | տ.չ. | տ.չ. |
| 2006 | 0.19 | 2.95 | 14.74 | 47000 | 3.71 | 4 | տ.չ. |
| 2007 | 0.28 | 3.04 | 13.57 | 42000 | 3.3 | տ.չ. | 1 |
| 2008 | 0.4 | 3.4 | 15.27 | 42000 | 3.31 | տ.չ. | տ.չ. |
| 2009 | 0.36 | 4.16 | 14.56 | 55570 | 4.34 | տ.չ. | 46 |
| 2010 | 0.4 | 4.27 | 16.28 | 55528 | 4.15 | տ.չ. | 52 |
| 2011 | 0.39 | 3.85 | 15.44 | 55544 | 4.07 | տ.չ. | 5 |
| 2012 | 0.38 | 3.58 | 15.99 | 49100 | 3.59 | տ.չ. | տ.չ. |
| 2013 | 0.44 | 4 | 16.8 | 49100 | 3.6 | տ.չ. | 16 |
| 2014 | 0.46 | 3.94 | 16.44 | 49100 | 3.66 | տ.չ. | տ.չ. |
| 2015 | 0.45 | 4.24 | 16.1 | 49100 | 3.73 | տ.չ. | տ.չ. |
| 2016 | 0.43 | 4.09 | 15.12 | 49100 | 3.84 | տ.չ. | 110 |
| 2017 | 0.44 | 3.85 | 14.79 | 49000 | 3.88 | տ.չ. | 18 |
| 2018 | 0.51 | 4.12 | 17.13 | 48800 | 4.06 | տ.չ. | տ.չ. |
| 2019 | 0.65 | 4.79 | 19.23 | 49000 | 4.03 | տ.չ. | 248 |
| 2020 | 0.63 | 4.98 | 16.26 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | տ.չ. |
| 2021 | 0.62 | 4.44 | 16.32 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | տ.չ. |

[3] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

## Ադրբեջանի Հանրապետության ռազմական զարգացման հիմնական ցուցանիշները, 1992-2021 թթ.[4]

| Տարի | Ռազմական ծախսեր՝ միլիարդ ԱՄՆ դոլար | Ռազմական ծախսեր, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով | Ռազմական ծախսեր՝ ընդհանուր պետական ծախսերի նկատմամբ տոկոսով | Հիմնական ուժերի անձնակազմ | Հիմնական ուժերի անձնակազմ՝ աշխարհում նկատմամբ տոկոսով | Հենքի արդյունաբերություն՝ միլիոն ԱՄՆ դոլար | Հենքի ներմուծում՝ միլիոն ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1992 | 0.01 | 2.4 | տ.չ. | 43000 | 1.2 | տ.չ. | տ.չ. |
| 1993 | 0.08 | 5 | տ.չ. | 45000 | 1.2 | տ.չ. | 50 |
| 1994 | 0.04 | 1.95 | 8.02 | 50000 | 1.28 | տ.չ. | 25 |
| 1995 | 0.07 | 2.74 | 14.67 | 126700 | 3.15 | տ.չ. | տ.չ. |
| 1996 | 0.07 | 2.25 | 11.41 | 110700 | 2.7 | տ.չ. | տ.չ. |
| 1997 | 0.09 | 2.32 | 11.5 | 106700 | 2.57 | տ.չ. | տ.չ. |
| 1998 | 0.11 | 2.41 | 13.39 | 87150 | 2.08 | տ.չ. | տ.չ. |
| 1999 | 0.12 | 2.63 | 13.46 | 84900 | 2 | տ.չ. | տ.չ. |
| 2000 | 0.12 | 2.27 | 12.43 | 87100 | 2.03 | տ.չ. | 3 |
| 2001 | 0.13 | 2.31 | 13.78 | 87100 | 2.04 | տ.չ. | տ.չ. |
| 2002 | 0.14 | 2.24 | 9.69 | 87100 | 2.05 | տ.չ. | 89 |
| 2003 | 0.18 | 2.43 | 11.2 | 81500 | 1.93 | տ.չ. | տ.չ. |
| 2004 | 0.23 | 2.63 | 10.86 | 81000 | 1.92 | տ.չ. | 4 |
| 2005 | 0.3 | 2.3 | 10.22 | 82000 | 1.94 | տ.չ. | 53 |
| 2006 | 0.72 | 3.42 | 13.51 | 82000 | 1.94 | տ.չ. | 159 |
| 2007 | 0.95 | 2.86 | 10.99 | 82000 | 1.9 | տ.չ. | 213 |
| 2008 | 1.61 | 3.29 | 10.47 | 82000 | 1.87 | տ.չ. | 33 |
| 2009 | 1.47 | 3.33 | 9.64 | 81940 | 1.86 | տ.չ. | 145 |
| 2010 | 1.48 | 2.79 | 8.73 | 81940 | 1.84 | տ.չ. | 155 |
| 2011 | 3.08 | 4.67 | 13.84 | 81950 | 1.82 | տ.չ. | 557 |
| 2012 | 3.25 | 4.66 | 12.72 | 81950 | 1.8 | տ.չ. | 371 |
| 2013 | 3.37 | 4.54 | 12.02 | 81950 | 1.77 | տ.չ. | 385 |
| 2014 | 3.43 | 4.56 | 12.52 | 81950 | 1.74 | տ.չ. | 624 |
| 2015 | 2.9 | 5.46 | 14.13 | 81950 | 1.71 | տ.չ. | 335 |
| 2016 | 1.4 | 3.69 | 10.42 | 81950 | 1.68 | տ.չ. | 274 |
| 2017 | 1.53 | 3.76 | 10.58 | 82000 | 1.66 | տ.չ. | 290 |
| 2018 | 1.67 | 3.56 | 10.71 | 81950 | 1.63 | տ.չ. | 365 |
| 2019 | 1.85 | 3.87 | 11.9 | 82000 | 1.63 | տ.չ. | 44 |
| 2020 | 2.24 | 5.39 | 13.03 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | 29 |
| 2021 | 2.7 | 5.27 | 14.19 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | տ.չ. |

[5] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

**Վրաստանի Հանրապետության ռազմական զարգացման հիմնական ցուցանիշները, 1993-2021 թթ.[5]**

| Տարի | Ռազմական ծախսերը՝ միլիարդ ԱՄՆ դոլար | Ռազմական ծախսերը՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով | Ռազմական ծախսերը՝ ընդհանուր պետական ծախսերի նկատմամբ տոկոսով | Շինված ուժերի անձնակազմ | Շինված ուժերի անձնակազմ՝ աշխատուժի նկատմամբ տոկոսով | Շենքի արդյունաբերում՝ միլիոն ԱՄՆ դոլար | Շենքի ներմուծում՝ միլիոն ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1993 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | 25000 | 1 | տ.չ. | 4 |
| 1994 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | 7000 | 0.28 | տ.չ. | տ.չ. |
| 1995 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | 14000 | 0.59 | տ.չ. | տ.չ. |
| 1996 | 0.07 | 2.21 | 11.7 | 15000 | 0.66 | տ.չ. | տ.չ. |
| 1997 | 0.04 | 1.25 | 5.57 | 39200 | 1.81 | տ.չ. | 4 |
| 1998 | 0.04 | 1.14 | 5.85 | 39200 | 1.86 | տ.չ. | 28 |
| 1999 | 0.03 | 0.92 | 4.55 | 32800 | 1.57 | 46 | 23 |
| 2000 | 0.02 | 0.62 | 3.54 | 33400 | 1.67 | 69 | 6 |
| 2001 | 0.02 | 0.74 | 4.28 | 28500 | 1.39 | տ.չ. | 85 |
| 2002 | 0.03 | 1 | 6.09 | 29200 | 1.45 | 69 | տ.չ. |
| 2003 | 0.04 | 1.07 | 6.46 | 29200 | 1.43 | տ.չ. | 1 |
| 2004 | 0.07 | 1.37 | 7.09 | 22000 | 1.09 | 16 | 37 |
| 2005 | 0.21 | 3.34 | 15.03 | 23000 | 1.15 | տ.չ. | 92 |
| 2006 | 0.4 | 5.22 | 22.4 | 33000 | 1.7 | տ.չ. | 97 |
| 2007 | 0.93 | 9.16 | 32.22 | 33000 | 1.67 | տ.չ. | 161 |
| 2008 | 1.09 | 8.52 | 26.08 | 33000 | 1.66 | տ.չ. | 132 |
| 2009 | 0.6 | 5.61 | 15.66 | 32355 | 1.62 | տ.չ. | 38 |
| 2010 | 0.45 | 3.71 | 11.8 | 32355 | 1.61 | տ.չ. | տ.չ. |
| 2011 | 0.47 | 3.1 | 11.17 | 32350 | 1.6 | տ.չ. | 2 |
| 2012 | 0.49 | 2.98 | 10.5 | 32350 | 1.58 | տ.չ. | տ.չ. |
| 2013 | 0.44 | 2.57 | 9.48 | 32350 | 1.6 | տ.չ. | 5 |
| 2014 | 0.42 | 2.36 | 8.41 | 32350 | 1.59 | տ.չ. | 1 |
| 2015 | 0.3 | 2 | 7.29 | 26050 | 1.26 | տ.չ. | տ.չ. |
| 2016 | 0.32 | 2.08 | 7.34 | 26050 | 1.27 | 6 | տ.չ. |
| 2017 | 0.32 | 1.97 | 7.14 | 26000 | 1.32 | 7 | 7 |
| 2018 | 0.33 | 1.9 | 6.98 | 25650 | 1.35 | տ.չ. | 43 |
| 2019 | 0.31 | 1.75 | 6.14 | 26000 | 1.4 | տ.չ. | 6 |
| 2020 | 0.29 | 1.78 | 5.24 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | տ.չ. |
| 2021 | 0.3 | 1.67 | 5.24 | տ.չ. | տ.չ. | տ.չ. | տ.չ. |

[5] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմական ծախսերը, միլիարդ ԱՄՆ դոլար, 1992-2020 թթ.[6]**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմական ծախսերը՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով, 1992-2021 թթ.[7]**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմական ծախսերն ընդհանուր պետական ծախսերում՝ տոկոսով, 1994-2021 թթ.[8]**

[6] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[7] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[8] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի զինված ուժերի անձնակազմը, 1992-2020 թթ.[9]**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի զինված ուժերի անձնակազմը, աշխատուժի տոկոսը, 1992-2020 թթ.[10]**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

**Հայաստանի և Վրաստանի զենքի արտահանումը, միլիոն ԱՄՆ դոլար, 1999-2017 թթ.[11]**

[9] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[10] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:
[11] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:




ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

**Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կողմից զենքի ներմուծումը, միլիոն ԱՄՆ դոլար, 1993-2020 թթ.**[12]

1-ում բերված են հարավկովկասյան երեք հանրապետությունների ռազմական ծախսերն ըստ առանձին տարիների՝ միլիարդ ԱՄՆ դոլարով, 1992-2020 թթ.-ի համար:

Գծապատկեր 2-ում ներկայացված են հարավկովկասյան հանրապետությունների ռազմական ծախսերը՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով:

Գծապատկեր 2-ից երևում է, որ նշված ժամանակաշրջանում Ադրբեջանում ՀՆԱ-ի նկատմամբ ռազմական ծախսերը, Հայաստանի համեմատությամբ, բացառությամբ 2016-2018 թթ., ավելի մեծ են եղել:

Գծապատկեր 3-ում ներկայացված է պետական ծախսերի կազմում ռազմական ծախսերի բաժինը՝ տոկոսով:

Գծապատկեր 3-ից երևում է, որ 2005-2021 թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանն Ադրբեջանի համեմատությամբ ունեցել է բարձր ցուցանիշ: 1997-2005 թթ. և 2011-2021 թթ. Վրաստանը սույն ցուցանիշով զիջել է և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին:

Գծապատկեր 5-ից երևում է, որ 1992-2020 թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանը Ադրբեջանի և Վրաստանի համեմատությամբ ունեցել է բարձր ցուցանիշ:

Գծապատկեր 6-ից երևում է, որ 1999-2017 թթ.-ի համար Ադրբեջանից զենքի արտահանման տվյալները բացակայում են: 2000-2001, 2004, 2016-2017 թթ. Վրաստանում գրանցվել է զենքի արտահանման աճ, իսկ մյուս տարիների վերաբերյալ տվյալները բացակայում են: Հայաստանում զենքի արտահանում նկատվել է միայն 2006 թվականին, իսկ մյուս տարիների վերաբերյալ տվյալները բացակայում են:

Գծապատկեր 7-ից երևում է, որ 1993-1997 թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանը զենքի ներմուծման ցուցանիշով ավելի առաջ է անցել Ադրբեջանից և Վրաստանից: Վրաստանի տվյալները սույն ժամանակահատվածում բացակայում են: 2011-2018 թթ. զենքի ներմուծմամբ Ադրբեջանը եղել է առաջատար, իսկ 2011-2013 թթ. և 2014-2016 թթ. տվյալները բացակայում են: Հայաստանում զենքի զգալի ներմուծում նկատվել է 1997-2001 թթ., 2003-2009 թթ. և 2017-2019 թթ.:

### *Եզրակացություն*

Կատարված հետազոտությունից հետևում է, որ հարավկովկասյան երեք հանրապետություններից Հայաստանում և Ադրբեջանում նշված ժամանակահատվածում ռազմական ծախսերը զգալիորեն ավելացել են, ինչը կապված է եղել Լեռնային

[12] Կազմվել է՝ www.theglobaleconomy.com–ի տվյալների հիման վրա:

Ղարաբաղի հակամարտության հետ: Ըստ որում, Ադրբեջանը զգալիորեն ավելի մեծ ծախսեր է կատարել, քան Հայաստանը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում այդ տարբերությունը 4,4 անգամ է, ինչն էլ կանխորոշել է 2020 թ. 44-օրյա պատերազմի ելքը: Ակներև է դառնում, որ նշված հանգամանքը պայմանավորված է 2 հանրապետությունների տնտեսությունների մրցակցությամբ, որի պարագայում հաղթում է հարուստ ռեսուրսներով ուժեղ պետությունը: Տարածաշրջանային մրցակցության պայմաններում, հետևաբար, Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ է դառնում տնտեսության բարձր տեմպերով զարգացումը՝ ռեսուրսաարդյունավետ քաղաքականության իրականացմամբ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Stockholm International Peace Research Institute. The economic outlook around the world.
2. https://data.worldbank.org/indicator/MS.MIL.XPND.GD.ZS
3. www.theglobaleconomy.com
4. https://worldbank.org



**Ашот МАРКОСЯН**
*Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор*

**Меружан МАРКОСЯН**
*Общественная организация «Политологических, юридических и экономических исследований и прогнозирований», кандидат экономических наук*


БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

## ПОКАЗАТЕЛИ ВОЕННОГО РАЗВИТИЯ В СТРАНАХ ЮЖНОГО КАВКАЗА


В современном мире развитие военного потенциала и обороноспособности становится основополагающим фактором развития страны. Многие страны, управляя показателями развития своего военного потенциала, все больше внимания уделяют военным расходам, рассматривая последние как факторы обороноспособности и стабильности. Обеспечение государственной безопасности и обороноспособности страны во все времена развития во многом зависело от внедрения передовых военных технологий и наличия стабильной экономики. Последние события в мире и особенно в республиках Южного Кавказа создают основу для того, чтобы страны с небольшой экономической мощью уделяли больше внимания своей экономической политике в контексте военного строительства, которая станет основой для обеспечения обороноспособности и безопасности страны.



**Ключевые слова:** *показатели военного развития, оборона, военные расходы, личный состав вооруженных сил, экспорт вооружений, импорт вооружений*

**Ashot MARKOSYAN**
*Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,*
*Doctor of Sciences (Economics), Professor*

**Meruzhan MARKOSYAN**
*«Political, Legal and Economic Research and Forecasting» NGO,*
*PhD in Economics*

SECURITY AND CHALLENGES

## INDICATORS OF MILITARY DEVELOPMENT IN THE COUNTRIES OF THE SOUTH CAUCASUS

In the modern world, military development and defense are becoming fundamental for the development of the country. Many countries, managing their military development indicators, pay more attention to military spending, considering the latter as defense and stability. Ensuring the state security and defense capability of the country throughout all stages of development has largely depended on advanced military technologies and a stable economy. Recent global events, particularly in the republics of the South Caucasus create a basis that countries with small economies should pay more attention to their economic policy in the context of military development, Such focus will serve as the foundation for national  defense and security.

**Key words:** *indicators of military development, defense, military spending, armed forces personnel, arms exports, arms imports*